«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱԾՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒՄ (ԸՆԴՀՈՒՊ ՄԻՆՉԵՎ -40 °C) ՀԱԷԿ-Ի ԱՂԱԶՐԿՎԱԾ ՋՐԻ ՊԱՇԱՐԻ ԲԱՔԻ ԵՎ ՆՐԱ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՍԱՌԵՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱԷԿ-Ի ՀՐԱՊԱՐԱԿԻ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՓԱՆՈՂ ՀԵՂԵՂԻ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՏԱՐՐԵՐԻ ՀԵՂԵՂՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱԷԿ-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՍՐԱՀՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ՝ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՂԵՂՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) 03/030 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«06» «08» 2018թ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03/030

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-19/18»

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Արթուր Բաղդասարյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից տրված 07.11.2017թ. լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Ամիրջանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ցածր ջերմաստիճաններում (ընդհուպ մինչև -40 °C) ՀԱԷԿ-ի աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցման վերլուծության և կանխարգելիչ միջոցառումների մշակման, ՀԱԷԿ-ի հրապարակի ջրահեռացման համակարգը խափանող հեղեղի ուժգնության հավանականային գնահատում և տարրերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակման, ՀԱԷԿ-ի հրապարակում սեյսմիկ ազդեցության դեպքում մեքենայական սրահում տեղակայված՝ 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **7 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19114860 (տասնինը միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ-3185810** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ, **Հ/Հ** 1930000199200100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան, **ՀՎՀՀ** 04401874, **Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69, **Հեռ.**՝ 20-04-91, 33-40 **E-mail**: anpp@anpp.am	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 **Հ/Հ 2052022100061001** Ինեկոբանկ ՓԲԸ **ՀՎՀՀ** 02558849, **Հեռ.**՝ 54-17-19 **E-mail**: info@nrsc.am
.....Ա. Բաղդասարյան	.....Ա. Ամիրջանյան

Հավելված N 1
«06» «08» 2018թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով
N 03/030 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	98111120	**Ցածր ջերմաստիճաններում (ընդհուպ մինչև -40 °C) ՀԱԷԿ-ի աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցման վերլուծության և կանխարգելիչ միջոցառումների մշակում** **Տեղանքի ուսումնասիրություն** • Նախագծային տվյալների հավաքագրում և աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի տեղանքի ուսումնասիրություն; • Օդերևութաբանական տվյալների հավաքագրում ՀԱԷԿ-ի հրապարակում բացասական ջերմաստիճանների վերաբերյալ; • Հաշվարկային եղանակով ջերմատարի սառեցման ջերմաստիճանի որոշում ակտիվ գոտու վթարային հովացման համակարգի կոմպոնենտներում: **Ծայրահեղ ցածր ջերմաստիճանների ի հայտ գալու հավանականության գնահատում** • Հավանականությունների գնահատում և հավանականային կորերի կառուցում ծայրահեղ ցածր ջերմաստիճանների համար (ընդհուպ մինչև -40^{0}C): **Անվտանգության համակարգի ֆունկցիայի կորստի հնարավորության դիտարկում՝ ներառյալ աղազրկված ջրի պաշարի բաքը, ինչպես նաև նրա խողովակաշարերի սարքավորումները և տարրերը**	դրամ	**6236640**		**Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ տարածք**	**Պայմանագիրը ստորագրելու օրվանից հաշված 8 (ութ) ամիս**

		• Աղազրկված ջրի պաշարի բաքի և դրա խողովակաշարերի տարրերի ջերմահիդրավլիկ մոդելի մշակում COCOSYS ծրագրային միջոցով; • Մշակված մոդելի միջոցով շրջակա միջավայրի նվազագույն ջերմաստիճանի որոշում, որի դեպքում հնարավոր է աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցում; • Հաշվարկների միջոցով աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցման կանխարգելման միջոցառումների տեխնիկական պայմանների որոշում: **Առաջարկվող միջոցառումների ցանկի մշակում** Ուսումնասիրությունների արդյունքների և ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի վրա վնասների ազդեցության վերլուծության հիման վրա աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցման կանխարգելման միջոցառումների ցանկի մշակում՝ ներառյալ հաշվարկային հիմնավորումները:					
2	**98111120**	**ՀԱԷԿ-ի հրապարակի ջրահեռացման համակարգը խափանող հեղեղի ուժգնության հավանականային գնահատում և տարրերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակում** **Օդերևութաբանական տվյալների ուսումնասիրություն և հավաքագրում** • Անձրևի տեսքով տեղումների ուժգնության վերաբերյալ օդերևութաբանական տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն; • Հավանականությունների գնահատում և անձրևի տեսքով տեղումների հավանականային կորերի կառուցում; • Անձրևի տեսքով տեղումների առավելագույն ուժգնության դեպքում ՀԱԷԿ-ի հրապարակ մուտք գործող ջրի քանակի գնահատում: **ՀԱԷԿ-ի հրապարակի ջրահեռացման համակարգի կարողության գնահատում** • Ջրահեռացման համակարգի թողունակության գնահատում; • Սահմանային դեպքերի որոշում, որոնք հանգեցնում են	դրամ	**6379020**		**Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ տարածք**	**Պայմանագիրը ստորագրելու օրվանից հաշված 10 (տասը) ամիս**

		ՀԱԷԿ-ի հրապարակի ջրահեռացման համակարգի խափանմանը; • Հրապարակի ջրի առավելագույն մակարդակի գնահատում ջրահեռացման համակարգի խափանման դեպքում; • Անվտանգության համակարգերի որոշում, որոնց համար առկա է հեղեղման սպառնալիք ջրահեռացման համակարգի խափանման դեպքում: **Հնարավոր հեղեղների հետևանքների գնահատում** • Հիմնվելով ջրի քանակի գնահատման արդյունքների և հրապարակի ջրի առավելագույն մակարդակի վրա՝ անվտանգության վրա ազդող համակարգերի հնարավոր վնասների որոշում; Գնահատել ակտիվ գոտու վնասման հավանականության հնարավոր աճը: **Առաջարկվող միջոցառումների ցանկի մշակում** Ուսումնասիրությունների արդյունքների և ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի վրա ազդեցության վերլուծության հիման վրա տարրերի և սարքավորումների հեղեղման հետևանքների կանխարգելման միջոցառումների ցանկի մշակում:					
3	**98111120**	**ՀԱԷԿ-ի հրապարակում սեյսմիկ ազդեցության դեպքում մեքենայական սրահում տեղակայված՝ 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակում** **Ջրի մուտքի ուղիների որոշումը ՀԱԷԿ-ի ցիրկուլացիոն ջրամատակարարման համակարգի ուղիների լրիվ խափանման դեպքում** • Նախագծային տվյալների հավաքագրում և ՀԱԷԿ-ի ցիրկուլացիոն ջրամատակարարման համակարգի ուղիների տեղանքի ուսումնասիրություն; • Մեքենայական սրահում առավելագույն քանակությամբ ջրի մուտքի ուղիների որոշումը ՀԱԷԿ-ի ցիրկուլացիոն ջրամատակարարման համակարգի ուղիների լրիվ խափանման դեպքում՝ կիրառելով դետերմինիստիկ և ճարտարագիտական	դրամ	**6499200**		**Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ տարածք**	**Պայմանագիրը ստորագրելու օրվանից հաշված 10 (տասը) ամիս**

		մոտեցումներ: **2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի հեղեղման հավանականության գնահատում** • Նախագծային տվյալների հավաքագրում և ՀԱԷԿ-ի մեքենայական սրահի ուսումնասիրություն 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի և էլեկտրական հավաքվածքների տեղակայման վայրերի գնահատման համար; • Նախագծային փաստաթղթերի հիման վրա մեքենայական սրահի հեղեղման դեպքում 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի և էլեկտրական հավաքվածքների վնասման ճանապարհների բացահայտում; • Մեքենայական սրահ մուտք գործող ջրի առավելագույն քանակության գնահատում ՀԱԷԿ-ի ցիրկուլացիոն ջրամատակարարման համակարգի ուղիների լրիվ խափանման դեպքում՝ կիրառելով դետերմինիստիկ և ճարտարագիտական մոտեցումներ; • ՀԱԷԿ-ի մեքենայական սրահում սարքավորումների տեղակայման վայրերում ջրի հնարավոր մակարդակի որոշում՝ մեքենայական սրահ մուտք գործող առավելագույն քանակությամբ ջրի քանակի հիման վրա; • 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի և էլեկտրական հավաքվածքների տեղակայման վայրերում ջրի մակարդակի գնահատում: **Անվտանգության համար կարևոր համակարգերի հնարավոր վնասների գնահատում** • Մեքենայական սրահի, համակարգերի տեղակայման վայրերի ուսումնասիրությունների և մեքենայական սրահ մուտք գործող ջրի քանակի գնահատման արդյունքների հիման վրա 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի սարքավորումների և տարրերի հնարավոր վնասների սահմանում՝ սարքավորումների նախագծային փաստաթղթերի և ճարտարագիտական մոտեցումների հիման վրա;					

		ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության վրա բացահայտված հնարավոր վնասների ազդեցության գնահատում: **Առաջարկվող միջոցառումների ցանկի մշակում** ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի վրա հեղեղման վնասների ազդեցության վերլուծության հիման վրա տարրերի և սարքավորումների հեղեղման կանխարգելման միջոցառումների ցանկի մշակում:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... Ա. Բաղդասարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

..... Ա. Ամիրջանյան

Հավելված N 2
«06» «08» 2018թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով
N 03/030 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-2019թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Սեպտեմբեր, 2018	Հոկտեմբեր, 2018	Նոյեմբեր, 2018	Դեկտեմբեր, 2018	Հունվար, 2019	Փետրվար, 2019	Մարտ, 2019	Ապրիլ, 2019	**Մայիս, 2019**	Հունիս, 2019	**Հուլիս, 2019**	Օգոստոս-դեկտեմբեր, 2019	**Ընդամենը**
1	98111120	Ցածր ջերմաստիճաններում (ընդհուպ մինչև -40 °C) ՀԱԷԿ-ի աղազրկված ջրի պաշարի բաքի և նրա խողովակաշարերի սառեցման վերլուծության և կանխարգելիչ միջոցառումների մշակում									6236640				6236640
2	98111120	ՀԱԷԿ-ի հրապարակի ջրահեռացման համակարգը խափանող հեղեղի ուժգնության հավանականային գնահատում և տարրերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակում											6379020		6379020
3	98111120	ՀԱԷԿ-ի հրապարակում սեյսմիկ ազդեցության դեպքում մեքենայական սրահում տեղակայված՝ 2-րդ էներգաբլոկի անվտանգության համար կարևոր համակարգերի հեղեղման կանխարգելման միջոցառումների մշակում											6499200		6499200
														Ընդամենը՝	**19114860**

** Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... **Ա. Բաղդասարյան**

ԿԱՏԱՐՈՂ
«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

..... **Ա. Ամիրջանյան**

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն